

չատիրը սիրելիլաներէն որունք ապագան կը տեսնէին : Այդ մտածմամբ՝ անշուշտ՝ դատարկ աչքեր տուին իրենց աստուածներու արձաններուն , որպէսզի անոնց մեծութիւնը խորհրդապատկերեն այդ վեհափառ պարագով ուր անոնք կրնայ սղմիլ :

Կոյրը տեսանողն է . Կոյրը ստեղծագործն է . իր փրկարար խաւարովը դռնիկ արտաքնութեանէն անհրաժեշտ , անիկա մարդոցմէ ամենէն ատակն է ինքն իսկ իր հողիովն իր տիեզերքը ստեղծելու : Ան արեւեհեր կ'երևակայէ մեր տեսածէն աւելի գեղեցիկ . ան զարուհներ կը զգայ որոնց վրայ մինքն զազափար չուներք , մուծիին մէջէն անիկա Աստուած կ'ընդունշմարէ : Դիտակաւոր որ ականջը կը խցէ փողոցին աղմուկներուն եւ նիւթին իսկուծիւնը թիւնը թափանցելու կը հետապնդի , բանաստեղծը որ սա տիղմը կը մոռնայ եւ աստղերուն կը սիրահարի և հերոսը որ զազափարի մը համար մահուան գիրկը կը նետուի , ձգտողներ են դէպ ի վսեմ Կուրուծիւնը . անոնք աչուրնին ցոց մարդիկն են որ հետուն կը տեսնեն :

Տեսնուածին հրապոյրը , շօշափուածին փայլը , գիտցուածին քաղցրութիւնը ոչինչ են երեւակայուածին , ստեղծուածին , խորհրդաւորին գեղեցիկութեանը քով : Ո՞ր ծաղիկը պիտի հաւասարի միատրեական վարդին որուն համար ամբողջ մարդկութիւն մը կարօտակէզ հալեցաւ : Աստղերուն ամենէն անուշները անոնք են որ անտեսանելի տիեզերքներուն մէջ կը ժպտին : Նրկրի աղջիկներուն ամենէն գեղեցիկն աչուրները այնչափ գեղեցիկ չեն որչափ ներքին նայուածքը կոյր աղջկանը որ իր մահուաներուն յաւիտեական սուրբին մէջէն աշուտ չափ քաղցր ու խորին սիրով մը կը սիրէ :

Ամենէն բարձր յուզմունքներուն ատեն , աչուրնիս կը գոցենք , Նրաժշտութեան ասուր սուտին տակ , սիրոյ գերագոյն գողին մէջ , կամ երբոր մեծ ցաւով մը գիշողանք մեր կտրուկ ինքնին վար կ'իջնեն , իրերը կը սքողուն մենէ , մենք մեր հոգիին հետ մինակ կը մնանք , վայրկեան մը Կոյր կ'ըլլանք :

Ու բոլոր տիպարներուն մէջ ուր մարդկութիւնը կ'ամբողջուի ու կը պատկերաւաչ , ամենէն մեծը տիպարն է իղիպտան , որուն աշունիկ կեանքը իր պսակն ընդունեցաւ արիւնոտ խաւարին մէջ աւարտելով . անիկա իր էութեան բարձրագոյն ընդլայնումն հասաւ երբոր ա-

չուրնիրը փոքից , թափառողից տուր ձեռք առաւ ու ճամբայ ելաւ դէպ ի անծանօթ ու մոռալ հորիզոնները : Տիպարներուն տիպարն է ան . մեծ Կոյրը . ան որ կեանքը ամբողջ ապրեցաւ . ան որ կեանքին մէջէն արգէն մահը հասկցաւ : Կոյր մուրացկանները որոնք կ'անցնին մեր ճամբաներէն , մեր բարեկեան գանին մէջէն իրենց ողբը պառտցնելով , անոր զէմքին յաւիտեական շարունակութիւնն են : Անոնք կեանքին ընդերքը կը ցուցնեն մեզի , անոնք մեզի կը յիշեցնեն ինչ որ չենք գիտեր եւ . ինչ որ կ'ուզենք մոռնալ . անոնք մեզի կ'ըսեն թէ մենք ամենքս քաղցրներն ենք , մութին մէջ , ողբին օրորովը , դէպ ի հեռաւոր հանգրուանները , մինչեւ որ հասնինք վերջնական մթութեան , մինչեւ որ մահենք մահուան խաւարին մէջ , ուր թերեւս պիտի հասկնանք ինչ որ հոս չ'հասկցանք :

ՏԵՐՎԻՆ



ԳԵՐԻՄԱՆ, ՔԱՍԿԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԱՅՄԱՆՈՒՄ (*) ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐ . (**)

Հարց է առաջ դալիս , ի՞նչ նշանակութիւն ունի Հայերի համար Գերմանիայի ներկայ տոնակեանք քաղաքականութիւնը , Բայց աւրանից առաջ մի ուրիշ հարց է առաջանում . ունի՞ , կամ՝ կարո՞ղ է այդ քաղաքականութիւնը առնառաքով ունենալ որ եւ է լուրջ նշանակութիւն :

A priori, Գերմանիայի երևույն զարմահատանում արժանի է ուշադրութեան՝ ամենից առաջ այն պատճառով , որ արեւելեան հարցի վիճակն մէջ խառնուում է մի նոր պետութեան իսկ թէ՛ օրջանն նշանաւոր տարր կը հանդիսանայ Գերմանիայի Թրքաց գործերի յառաջացման եւ լուծման մէջ , այդ ցոյց կը տայ ապագան : Այժմ կարելի է միայն մի քանի թեր ուղէմ կշառադատութիւններ բերել :

Տաճկական գործերի մէջ ներգործական միջամտութիւնը — Գերմանիայի համար բոլոր-

(*) Նախորդ յօդուածի մէջ (տես Անալիտիկ 1899 թիւ 12) «Տաճկահայաստանի փոխարէն հարգաւոր է կորցաւ օճաճկաստանի հմտնապետ , իսկն էլ , սիւնակ Բ . , տող 24 , ճճառնուածի փոխարէն օճաճանալուածի :

(**) Տես Անալիտիկ 1899, թիւ 12 :

բովին նոր եւ անակնկալ քալլ է: Մինչեւ այժմ նորա պետական քաղաքականութիւնը եւ հասարակական գիտակցութիւնը շատ հետեւ էին Արեւելեան հարցերին», — եւ իշխան Բիւսալը մինչեւ անպակաս սկզբնաւորով պընդում էր, մինչեւ իւր վերջի չ'անը, որ այդ հետազոտութիւնը պահպանուէր, վախճանով թէ չափազանց լայն քաղաքականութիւնը կը թուայնէր Կերմանիան, խառնելով նորան նուրբ եւ վտանգաւոր հարցերի ցանցին մէջ: (*) Դորա պատճառով, ինչպէս կառավարութիւնը աշխպէս եւ մամուլը ստիպուեցան ամէն կերպ ջանալ՝ Վիլհելմի 1896ին սկսած տաճկական քաղաքականութիւնը ժողովրդականացնելու համար: Քաղաքականութեան այդ չափազանց սուր փոփոխումը, կապածներ էր գաղթիցնում նորա հիմնաւորութեան մասին: Այդ կապածանքը վերջին երկու տարուայ ընթացքում, քաղաքական մամուլի ամենաթիւնով հարցերից մէջն էր կազմում, Ուստի, պախարակելով Կերմանացիներին յանկարծական իրադարձութիւնը՝ տաճկական գործերի նկատմամբ, այսինքն Վիլհելմի քաղաքականութիւնը Պոլսում, համարեա թէ տղայական, ցնորական էին անուանում: Ուրիշները աշխատում էին ապացուցանել, որ այդ ներկայ թրքոգիւրմանական յարաբերութիւնները բոլորովին համապատասխան են ժամանակի պահանջներին: Երկու կողմից էլ բերուեցան մի շարք հետաքրքիր փաստեր եւ սրամիտ դատողութիւններ: Անհամաձայնութեան պատճառը կայանում էր ի միջի այլոց եւ նորոնում, որ հակառակորդները վիճաբանութեան մէջ յաճախ ինկատի էին աւելում զանազան տարրերի: Այն ժամանակ եւր կապածամիտները հաստատացնում են որ Կերմանիան չէ կարող զոռ եւ խաղաղ Պոլսում Անգլիայի կամ Թուրքիայի դէմ, այսինքն «ամենալայն քաղաքականութիւն» գործադրել, ներկայ քաղաքականութեան համամիտները պնդում են, որ Փոքր Ասիան ներկայացնում է վերին աստիճանի յարմար ապարէզ Կերմանիայի «եկեղիմական» շահերի համար, և ուսքը բոլորովին զանազան բաների մասին է, եւ զոքա վերաբերակ կարելի է առ աժմ ալքան հիշատակ:

«Իրագործութիւն» արդեօք Կերմանիայի տաճկական ամրոցը ծրարիր, — այդ գոյցէ կախումա՞ծ է աւելի Թուրքիայից, քան թէ Կերմանիայից: Մերածած մարմինը ոչ մի բժիշկ չէ կարող երիտասարդացնել, ինչ վերաբերում է նորա անմիջական ձգտումներին — անուշադական, երկաթուղիական եւ (պապայային) զաղթականներու — ատանմին պատճառները չկան կապականիւ նոցա իրագործման կարելիութեան վրայ, նամանաւորդ որ ամենեւին գերմանական բնաւորութեան մէջ չէ ցնորա-

միտ ծրարիրներ ետեւից ընկնել՝ զբաղան նպատակներ, սասն կշտապատութիւնները, ամեն նաւթից հոսնել եւ ամուր կամք, — անա պըրուսիական քաղաքականութեան բնաբանը: Վնենեք այդ քաղաքականութեան նշանակութիւնը Հայերի համար մեր ցոյց տուած երկու տեսակէտից:

Ա. Երկրագրելով որ Կերմանիայի ազդեցութիւնը Թրքաց գործերի վերայ երկարատեւ եւ ներգործական կը լինի, այն ժամանակ եւս հազիւ թէ այդ ազդեցութիւնը կարողանայ որ եւ է փոփոխութիւն անել Հայերի ընդհանուր վիճակին մէջ: Այն բարեկարգումները (**) ռազմապիտական, երկրագործական եւ եկեղանական որոնք Կերմանիայի կառավարութիւնը մտադրի է անել Տաճկաստանի մէջ (ռազմապիտականը արդէն մասաւր եղած է), հազիւ թէ կարողանան ապահովացնել «հիւսնայ քաղաքները», զոռ երկարատեւ կեանք: Արդ, Պալմիրստոնը, թրքաւոր լինելով, նա էլ փորձառութեամբ շատ շուտ կորցրեց իր յուր Տաճկաց կառավարութեան վերանորոգման մասին (***) Կերմանիայի վերանորոգման ծրարքից, ամենից շատ կը շփոթուի, հակակրօնի պատճառներով, երեւի ռազմապիտական վերանորոգումը, եւ այն հանդամանքը կը նկատուի Տաճկաց հպատակ ազգերի աւելի ծանր ճնշման եւ ելդիղի աւելի մեծ անեղիւնութեան՝ մեծ պետութիւնների դիմումներին անող, Բայց այս ուժեղանալը նոյնպէս ժամանակաւոր կը լինի, որովհետեւ ինչպէս ասում է Էթիէն Լամբ «յաղթանակը նորան աղետարեւ է այնքան որքան պարտութիւնը» (****) կամ Ռեւանի պատկերական խօսքերով, «իսլամը աղմուկով քանդուում է»: Թուրքիայի անհետանալը անխուսափելի է: Մի բան եւս չպէտք է մոռանալ, զա որ բոլոր պետութիւնները գործում են Պոլսում Թուրքիայի լուծումը: Ինչպիսի ունենալով, թէ՛ նորա թշնամիքը եւ թէ՛ նորա բարեկամները վերջինները չէ՛ որ պահպանում են Թուրքիան: . . . Իրանը համար: Որքան որ մտնուիւմ է այդ «մտնու գութեան» բաժանման օրը, այնքան աւելի պարզ են որոշումը պետութիւնների շահերը այցեւել: Արդէն այժմ Կերմանիայի ուշադրութիւնը գրաւում է Փոքր-Ասիան: Մեծ Հայաստանի վերաբերմամբ նա ոչ մի պահանջ չէ անում: Ընդհակառակ, ինչպէս տեսանք յօդուած իս նախորդ բաժնում, նա այնատու է իրան հետու պահել այդ երկրից: Այս հանգամանքը ապացուցանում է գերմանական գործող

(*) Այդ վերանորոգումները մասին ասում է Լատմանը. «Երկարատեւ Թուրքիան ամեն քիչ բարեկարգումը ասելի է... ուստի Տարկուսը է ստեղծել մի կնչ, որ զերմանական բարեկարգման dictature, որի միտքը սա է՝ «Երեւելի, կեր կամ մեղքը (Asia էր 164)».

(**) Կերմանիայի պատասխանատվութիւնը Հայաստանի աւաւր, Մեղ կոյ, ուստիքն Թուրքմանիայի շահերի գրութիւնը ժողովածոյին մէջ, Երեւ 208:

(***) «La France du Levant», Revue des deux Mondes 1896, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30.

(*) Բերլինի վերջնական Բիսմարկի նախագահութեամբ հաղկի թէ կազմել է ընդամենը ինչպէս հակառակութիւն այս սկզբունքներով ինչպէս Կերմանիան այնպէս ներգործական գեր չէր կատարում:

քաղաքագետներին համոզումները որ Մեծ Հայաստանը պատմական պայմաններով վիճակաւ է Ռուսներին(*), Փոքր Ասիայն, ընդհանրապէս, ամբողջութեամբ, կամ մասամբ, կառուել է համարուել որպէս «Գերմանացիները բռնադատութեան ասպարէզ»։ Սորան նպաստում են, ինչպէս նոցա ներկայ երկաթուղիները, որոնք Արշակաղագորք միացնում են երկրի ներքին գաւառներին հետ, այնպէս էլ այդ գրծերի մտադրումը շարունակութիւնը։ «Փոքր Ասիան», ասում է Գերմանացի Dr. Rohrbachը Naumannի «Asia» գրքի իւր քննադատութեան մէջ, «Խարզանելի հարաւային կողմերից մինչ Տիգրիսի սկզբները, կարող ենք մենք նկատել որպէս միւր ասպարէզ կալուածք»։ Ինչպէս իրաւացի ասում է այս հեղինակը, այս երկրներին գրեւոր Ռուսաստանի համար կենսական խնդիր է կազմում(**), ուստի այդ պատճառով մեծ գիտութիւններ Գերմանիայի եւ Ռուսիոյ մէջ յատկ չեն գալու։ Ուրեմն այս երկու պետութիւնները հեշտութեամբ կարող են, փոխադարձաբար, carte blanche տալ իրանց համապատասխան ասպարէզներին համար։ միայն Միջազգային հարցը, որովորդ Գերմանացիք միջազգային երկաթուղին անցկացնէին, փոքր ինչ բարդ է։ «Times»-ը վիճեալից թղթակիցը նրա կարգադրելով ինչպիսի անհնարաւորութեամբ Ռուսները հետեւում են գերմանական ծրագրերին Միջազգային վերաբերելով, գրում էր։ «Մեր տարի հովիւրն քանակը հակառակ է Ռուսիայի առեւտրական շահերին, որովհետեւ սպասում է խախտել նորա գիրքը աշխարհային հարցի շուկայում»(***)։

Ուրեմն Մեծ Հայաստանը, առաջուայ պէս, գրեւոր է Ռուսիայի տրամադրութեան ներքեւ։

Իսկ ինչ վերաբերւում է հայաթնակ Կիլիկիայի, հարցը այստեղ այնքան էլ պարզ չէ։ Առաջով իշխում են այնտեղ Ֆրանսայի եւ Անգլիայի ազդեցութիւնը։ Նոր երկաթուղիների հարստային ծրագրով, Գերմանացիք միջազգային են հեռացնել այս երկրից իշխող պետութիւնների ազդեցութիւնը։ Կր յաղորդել նոցա թէ ոչ,—գիտարէ այդ մասին մի բան անաղագջ ասել։ յաժմայն ղէպէ պէտք է սպասել, որ այստեղ շուտով սկսին Անգլիայի, Ֆրանսայի եւ Գերմանիայի փոխադարձ ոտընդունութիւնները։ Ուրեմն այս երկրի Հայերի

վիճակի վերայ Գերմանիան կը խաղայ նշանաւոր դեր։

Ռուսներին կողմէն Մեծ Հայաստանի գրեւոր ղէմ, Կերմանիան, ինչպէս միշտ թուում է, կարող է հետեւեալ երկու հեղքով մեծ ընդլայնագրութիւն անել։ ա. եթէ այդ գրեւորմի փորձը գերմանական շահերի հետեւեալից, յարմար ժամանակ չէ անուելու, եւ բ. եթէ Անգլիան այնքան շահ ունենայ չիթողնելու Ռուսներին հայկական բարձրաւարդների վերայ, որ պատրաստ լինի որ եւ է ծանրակշիւ փոխարինութիւնով (compensation) գնել Գերմանիայի ասպարէզութիւնը այդ ուղղութեամբ։

Բ. եթէ նայինք այդ քաղաքականութեան վերայ իւր մասնաւոր անմիջական նպատակներէից(*), այն ժամանակ կարելի է աւելի հաստատել Ռուսագրութիւններ անել, երկաթուղի կառուցումը Փոքր Ասիայի ամբողջ երկայնութեամբ եւ տանիական առեւտրային զարկ տալու ձգտումը, սերտ առեւտրական յարաբերութիւններ ստեղծելով Գերմանիայի եւ Ռուսքիայի մէջ, անկասկած այն տարրերից կը լինին, որոնք փոքր ի շատ է կապահովացնեն Հայերի անդադար աւելումից, կոտորածներից, եւ կը նպաստեն նոցա նւթական եւ բարոյական զարգացումին։

Ինչպէս եւ ամէն մի եւրոպական ձեռնարկութիւն, Բաղդադի երկաթուղու հնկայ գործը անկասկած կը մացնէ երկրի մէջ եւ մի մասնիկ եւրոպական քաղաքականութեան ոգու, այսինքն իւր ներքին էութեամբ նա կը ստիպի որ Տաճկաց տէրութիւնը աւելի մեծ փառքեր գնէ քնակիչների կեանքի եւ սեփականութեան ապահովութիւնը երաշխաւորելու, Մուլթանի ուշադրութիւնը կը դարձնէ այն հանգամանքի վրայ որ առանց այդ ապահովութեան երկաթուղիական գործը կը միաստուի։ 95—96ի կոտորածները սնանկացրին բոլոր հայկական գաւառները (անտեսական վնասները Տր. Բորպախը գնահատում է մի ջանքի միլիոն)։ Առեւտրային քաղաքական է, աւերութեան զանաւարդ գատարկ, այնքան գատարկ, որ միայն ծայրայեղ ցանցերով յաղորդուի ջոցների գաւառներ Գերմանիոյ կայսրի բնդուներէն ինչու Ռուսներ համար Պոլսում. բնականաբար, այժմ կառավարութիւնը եւ մանաւանդ հեռաւոր գաւառական պայտօնները ոյինչ այնպէս չեն փախաւուր, ինչպէս մտքերի հանգարտացումը եւ իրերի կանոնաւոր գրուութեան վերականգնումը (**):

Եթէ բոլոր այս հետեւանքները ինքնբերական ընդհանրութեամբ Մուլթանի համար չարժեքի չեն հանգիստան իւրաքանչիւր այսպիսի կոտորածներից (թէպէտ հազիւ թէ), Բաղդադի երկաթուղին կը ստիպէ նորան հետեւանքներ վերայ աւելի

(*) Հետաքրքրութեան արժանի է Dr. Rohrbach-ի (որ երկու անգամ արեւելքը շրջել է) կարծիքը. «Թէ Առաջիկայի Ասիայի մեծ մասը անցնելու է Ռուսներին, դա պէտք է հաստատ համարել»։ «In Turca and Armenien», էջ 248.

(**) Իշխան Ռուսաստանը, յայտնի ռուս արեւելեան քաղաքագետը, մինչեւ անգամ ասում է, «Ռուսաստանը բնական է, եթէ նա տիրապետէ նեղուցների մի կողմին»։ Տես «Fürst Uchotomskij und russisch-deutsche Politik». Preussische Jahrbücher ամսագիրքով, 1896, XV տետր 2 երես 34.

(***) Այդ յօդուածի մասին տես Ռուսաց Nowoje Wremja, 1898 թիւստա 1. N. 844.

(*) Տես Նախորդ յօդուածը։

(**) «Deutsche und unter den Armeniern. «Preussische Jahrbücher» april 1899, 314—315.

ուշագրութիւն դարձնել, որովհետեւ, ապա հովացնելով այդ ձևութարութիւնը, *minimale* արդիւնքով, նա ստիպուած կը լինի կանխիկ վճարել, առանց յառաջութեան, ինչ գրութեան մէջ որ եւ լինի որ դանձարարը: Մի խոսքով, որքան որ ծանկաց կտառապարութիւնը շատ պարտաւորութեամբ լինի ևւրդպացիներին, այնքան շատ պիտի գործէ նա սոցա ոգով, այսինքն ոչ մարդասպանական, այլ խաղաղական, քաղաքակրթական (*):

Նոյնը կարելի է ասել եւ առեւտրային մասին, եթէ Բաղդադի երկաթուղու գծով, այսինքն հայկական դաւաճանքի մասին, գերմանական առեւտուրը լայն զարգացաւ, այն ժամանակ կը ստեղծուի մի ամբողջ գասակարգ գերմանական վաճառականներին, որոնք սերտ կեղծով շահ կ'ունենան որ այդ գաւառները խաղաղ դրութիւնը պահպանուի: Վաճառականը միշտ փախչու է այն տեղից որտեղ վաւուր է պատահարով, եւ այդ առեւտրական շահին են քաջանքան դժուար են դարձնում արդի պատերազմները, նոյնպէս եւ այդ գերմանա-արևելեան վաճառականը ի գործ կը դնէ ամբողջ իւր աղբեղութիւնը գերմանական կտառապարութեան վերայ, որպէսզի սա իւր արեւելեան քաղաքակրթութեան մէջ նպաստէ առականական գաւառներին խաղաղութեան (**): Այստեղ կը նկատուիք հետեւեղը:

Հայկական կողմից տմանք ասում են թէ «Գերմանացիներն եւ հայ վաճառականների մէջ թշնամութիւն կը ծագի՝ ահա ուրեմն ի միջի այլոց այդ քաղաքականութեան վաւուրը որ կողմը»:

Այդպիսի մի թշնամութիւն անկարելի չէր լինելու, երբ ենթադրէիք որ գերմանացի «փոքր» վաճառականները կը հեղձուին իր կիլիկիան եւ Միջագետքը (**), Նոցանից հաղթ թէ մէկը զայլ այդ կողմերը Պարզ է որ միայն «մեծ» վաճառականները կ'ուղարկեն այնտեղ իրենց բերքերը, եւ դոցա ու ժողովուրդը մէջ միջոցորդի գերը, այսինքն բերքերի վաճառումը կը կատարեն միայն տեղական ուժերը լինին զոքա հայ թէ յոյն վաճառականները: Նոցա եւ գերման զորամասերների մէջ թշնամութիւն չէ կարող լինել, ընդհակառակն նոցա միմեանց շատ հարկաւոր են: Յամենայն դէպս՝ հայ վաճառականները ստանալին անհետաւորութիւններ են եւ մի զանգուած (masse) չեն կազմում. որքան եւ դոցա հետ թշնամութիւն անելը

(*) Խոսելով արդի գերմանական երկաթուղիների մասին «Kölnische Zeitung»-ը (1899 յուլիս 23) գրում է. «այս երկրները, որոնք մի քանի տարի տարտնիք առաջ յայտնի էին իրանց առաջակային բարձր, այժմ բոլորովին խաղաղ են, ցեղերը եւ դաւաճութիւնների հակառակութիւնները մեղմացել են, նկատողութեան քաժան է նոյնպէս, որ Տարկանի խաղաղութիւնների ժամանակ երկրամուտու անցքի ոչ մի կէտում չէ պատահում միջոցառման արժանի էր ընդհարում ժողովրդի մէջ»:

(**) Այս զապափարի նշանները արդէն նկատելի են գերմանական մամուլի մէջ:

(***) Պիւլսը ուրիշ բան է:

Գերմանացիներին շահաւէտ լինի, այդպիսի մի թշնամութիւն հայկական «զանգուած»-ի, ժողովրդի հետ, անկարելի է, որովհետեւ դա վրաս է հէնց նոյն Գերմանացիներին: Եւ մեր խօսքը այստեղ անուշակ հայկական ընտելութեան մասին է եւ ոչ թէ հայ վաճառականների շահերի մասին է:

Անհերքելի է նոյնպէս որ ամէն մի աւելորդ Գերմանացի ծանկաստանում, ինչպէս էլ որ վերաբերուի դէպ ի Հայերի, խաղաղ ամառանակ, նորանոր կոտորածների պարագային՝ լինելով այդ երկրներում, կա մ'ողա մօտ, անկաս իւր յատկութիւններից եւ քաղաքական ուղղութիւնից, դառնում է այդ ժամանակ առեւելեան Հայերի քան Թուրքերին համակողմ: Ահա՛ համոզ եւ նախաբարոյական զաղաքակրթութիւնը միշտ աւելի հնչու կը լինի հետեւից քան մօտից: Այդ ապացուցելու զանազան հակառակ իրեր իրի իղթակիցները, թէ ինչ նշանակութիւն ունի ևւրդպացիների ներկայութիւնը ջարդերի տեղերում, ահնայաւ ապացուցեն Պոյսի (XIX) օրոյ տոտսի կոտորածները: Այն աղմուկը որ (5) 1) Հայերի մասը հաննց ևւրդպալում, աւելի մեծ էր քան թէ դորանից առաջ հարկւր հազարների ջարդը (*):

Այսքան կեանքի ապահովութեան մասին, Ինչ վերաբերում է գերմանական եւ ժամանակին ծրարագիւրների քաղաքական նշանակութեան՝ Հայերի համար, այդ կէտով վերայ այստեղ առ այժմ կանդ չենք առնելու: Պարզ է որ նոր երկաթուղիները, առեւտրական նոր կապերը եւ գերմանական զաղթականութիւնը, եթէ սոցա իրազեղոճուին, նշանակուր զարկ կը տան ժողովրդի տնտեսական բարգաւաճման (**): Եւ նորա մտաւոր ու բարոյական զարգացման:

Իայց ինձ թուում է որ այդ ձեռնարկները պիտի օգտաւէտ հանդիսանան Հայերին նոյնպէս եւ ազգայնական տնտեսական: Բնպէտ ճիշդ է, որ Հայք այնտեղ է պահպանում իւր ազգութիւնը, որտեղ չի չիւում օտար աւելի բարձր քաղաքակրթութեան հետ (այս մտքով բաղդադի ծանկահայերը Թուրքահայերի հետ), այնու ամենայնիւ չիւումը Գերմանացիներին հետ, որքան եւ սա սերտ լինի, չէ կարող հակազգային ազդեցութիւն ունենալ Հայերի վերայ, այդ չիւումը զանգուածային չէ լինելու, այլ անհատական: ապացոյց՝ ամերիկական միջ-սիտնարական դպրոցները Հայաստանում, որոնք վաթսուս տարեի ի վեր գոյութիւն ունին այնտեղ՝ նոցա ոչ միայն մեծ զարկ տուին լուս-

(*) Տես եւրոպական լրագրիները այդ դէպքերի ինտյոյ Տեսաքքեր է վեց դեպքանների ընդհանուր Տեսաքքը յուլիսին: դաւում ենք այստեղի դէպքերի մասին, այս բողոքն պիտի ընդհատուի, հակառակ դէպքում իտերիայի եւ մեր տոճի գոյութիւնը կակաւոր է դաւանում 10

(**) Թէ «բ'բան մեծ տնտեսական դեր են խաղացել արդի երկաթուղիները փոքր Ասիայում, ցոյց է տալիս Dr.Zander «Einwirkung des Kleinasiatischen Eisenbahnen auf die Hebung des Grudbesitzes, Archiv für Eisenbahnen»:

սաւորչական դպրոցներէ զարգացման, տա-
պելով յուսարչական եկեղեցին կոտիլ բո-
ղոքականութեան դէմ, այլ եւ ուղղակի
տուին եւ տալիս են զարգացած եւ գիտակցո-
ւելն ազգասէր Հայեր, Եւ Տր. Բորպիւր պատ-
մուէ էր թէ կոտորածներէ ժամանակ, բողո-
քական Հայերէն մասնաւորապէս փնտրուէին :
Իսկ եթէ յիշենք այստեղ եւ յայտնի գերմա-
նական Hilsbunde գործունէութիւնը, որ
պատմութեան ճանկաստանում իւր հաշուով
մօտ 2000 հայ որբեր, ծախսելով սոցա վերայ
տարեկան 400,000 ֆրանքից աւելի, եւ եթէ ի
նկատի ունենանք որ Hilsbunde գործունէու-
թիւնը կարող էր ստանալ իւր ներկայ ծա-
ւալը, միայն չնորհիւ գերմանական եւ թրք-
ական կառավարութիւններէ ընկերական յա-
րաբերութիւններէն (*), այն ժամանակ կարող
ենք ստել, որ Գերմանիայի ներկայ թրքական
քաղաքականութեան մէջ կան եւ Հայերի
համար մի քանի օգտաւէտ կողմեր :

ԳԵՈՐԳ ՄԵԼԻՔԻՍԻԱՆԿԵՆ



ԵԱՃՄԱՐԸ

ԱՐԵՒԻԹԻ ԿԵԱՆՔԷ

— Այո, քեզի կը սիրեմ, քու երկրիդ ա-
մանէն աղւոր ազնիւը, քեզի կը սիրեմ, ու
սիրտս աի մը ածուխի պէս կը միսայ. իմ տի-
րոջն ընտրածը, դուն իմ հոգւոյս տիրեցիր, ա'լ
անպիկ նաւու մը կը նմանիմ՝ ընդարձակ
ծովու մը մէջ լքուած, անթիւն թռչունի մը
պէս եմ որ թռչիլ կ'ուզեմ ու տեսնանք կը
խեղդուի մէջս...

«Քեզի կը սիրեմ, անոր համար գողցայ եւ-
մաքդ »

Ներքինին ճերմակ չղարչ մը սեղմեց կուրծ-
քին վրայ եւ յետոյ աչքերուն տարաւ, բայց
անոնք չոր միացին՝ լալու փափաքէն ծարա-
քուն, ընկճուած, կարմիր ֆէշն հանեց
գլխէն եւ երեսը ծածկեց հողին վրայ ու աչք-
պէս քանի մը բողբ միաց մտքէն երգելով իր
սրտին քերթուածը.

(*) Տես չեղք պաշտօնական ընդունելութեան նկարա-
գրութիւնը որ արած է Մարաշի միւստաւրիթի Գ. Լո-
մանի, և Hilsbundeի հարաւային կոմիտէներէ նա-
խագահին :

— «Ինչպէս թիթեռնիկ մը ծաղկանոցը
կ'իյնայ, այնպէս դուն եկար տիրոջս առնը :
Քու երկայն խորունկ աչքերդ օր մը չփայտե-
ցան, ու աշուն ծաղկի մը պէս շրթունքդ
զուարթ երգ մը չերգեցին : Ինչո՞ւ թարթիչ-
ներդ միշտ խոնաւ են, ինչո՞ւ այն հեւքի նմա-
նող հառաչանքներդ որ թանկապէն մարգրիտ-
ներու պէս քաղցեցի ամէն քայլիս քու քնա-
կարանիդ մէջ : Բայց դուն տառապանքներն մէջ
աւելի գեղեցիկ ես, ու անոր համար քեզի սիրե-
ցի, Նըր գիշերները ծայր մարի ու սրահնե-
րուն մէջ մինակ բուրմունքդ մնայ, երբ բազ-
մոցներուն վրայէն ծաղկի պէս մարմնիդ անե-
րեւութեան, ա'լ մինակ չպիտի ըլլամ. քու
եաշմաքը սրտիս վրայ՝ քեզի պիտի խորհիմ, ու
անոր վրայ քու պաշտելի գլխուգ հեաքը պիտի
փնտրեմ »

Ներքինին տաժանապէս ջանքով մը դուրսը
բարձրացուց : Չամբուն իր հակայ շուքը կը
տարածէր արեւէն խամճուած մարդագետնին
վրայ որ՝ ստուերով ողողուած՝ կապտորակ գոյ-
ներ կ'առնէր. կարմիր հողը՝ տեղ տեղ փայլի
պէս պրկուած՝ պիտի պայթէր կարծես Դի-
մացը, մեծ ճամբան գալարուելով կ'երկնամբ
ու հետզհետէ կը կորսուէր : Բզէզները կարծես
մէկէն անդամալուծուած կեցած էին օդին մէջ :
Հեռաւոր անցորդները կը գեղեւէին եւ արեւէն
գինով կը թուէին :

Սեւ ամուրի պէս աչքերուն մէջ խեղդելով իր
ըլորհրդալքը, ներքինին յանկարծ կանչեցաւ.
չիփ-չիտակ, Մորթը միտադի պէս կը փայլէր,
նայուածքը կապտորակ բոցի մը նման դուրս
խուճէր աչքերէն. լայ՝, մանրիակագոյն չըր-
թունքները՝ արեւնով քեռնաւորուած՝ կ'իյնային
դունչին վրայ, եւ տափակ շնորհները աւելի
կը տարածուէին. սեւ երկայն մատները, որ չոր
ստերու կը նմանէին, ջղածագորէն մապերուն
տարաւ, յետոյ երկայն եւ նուր հասակը ցցե-
լով օդին մէջ՝ մեկնեցաւ ծանր ծանր քա-
լելով :

Վերջապէս իր ոսկեգոյն ճառագայթները
կը հեղեղէր. խիտ վանդակին մէջէն ճա-
նանչները կ'իյնային վարդապոյն անդուսէ
բազմոցներուն վրայ եւ կը տփուռնէին հեռ-
զհետէ : Գիտինք, գորգերը, ծաղկած մարգագե-
տններու պէս իրենց ուժով գոյները կը նը-
շուէին, եւ անկեւնը՝ մեծ մանրիակապոյն ա-
նօթներու մէջ, թանկապէն բոյսեր իրենց շը-
նորհալի տերեւները կը տարածէին :